ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2024

Տավուշ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում միևնույն (փակագծերում նշված) տառը:**

1) հինավուր-, հանդիպակա-, մոլու-ք, անդամալույ- **(ց)**
2) գեղար-, հագուր-, հար-աշաղախ, ան-ր-վելի **(ղ)**
3) նավակատի-, ծե-ծե-ուն, լայնափող-, քողտի- **(ք)**
4) փո-կապ, տա-տկալի, հա-ճապակի, կա-կանձել **(ղ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով:**

1) ոլոր(մոլոր), ոչ(օրինական), ներկա(բացակա), շատից(քչից)
2) մրցույթ(փառատոն), քաղաք(ամրոց), յոթից(ութ), փայել(փայփայել)
3) մեն(մենակ), մերթ(մերթ), համով(հոտով), հույն(պարսկական)
4) հյուսիս(արևելք), հլու(հնազանդ), դեմ(հանդիման), ուրախ(զվարթ)

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների *ոչ* բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ՄԱՎՐԻՏԱՆԻԱՅԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, ՆՈՐ ՋՈՒՂԱ
2) ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ, ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԳԵՂԻ
3) ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ, ՆԵՐՍԵՍ ԵՐՐՈՐԴ ՏԱՅԵՑԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԳԵՏԻԿԱՎԱՆՔ
4) ՆՅՈՒ ՋԵՐՍԻ, ԴԱՎԻԹ ԱՆՀՈՂ, ՎԱՆ ՌԵՅՆ, ՎԵՐԻՆ ԴՎԻՆ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն ճիշտ տեղադրված:**

1) խնդ(ը)րել, սպ(ը)րդել
2) մխ(ը)րճվել, քն(ը)նվել
3) հանգց(ը)նել, կոթ(ը)նել
4) ձեռ(ը)նտու, հագն(ը)վել

5 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված բառի *այր* արմատը մյուսներից տարբեր իմաստ արտահայտում:**

1) Կամ ինչպես քաջքերն <u>այրերի</u> մթնից,
Երբ նայում է մարդ քարափի գլխից
Կամ թե ուշացած անցնում է ձորով,
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով…
2) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,
Ծնվեց նա՝ <u>Այր</u> մի՝ Մաշտոց անունով:
3) Ես գրում եմ բրուտների <u>այրի</u> մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
4) Եվ մութ <u>այրերից</u> մամռոտ ժայռերի,
Թավուտ ծմակի լռին խորքերից
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի
Արձագանքն ահա լսում եմ նորից:

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) գետնաքարշ, գիտնական, օրինապահ, անխուսափ
2) վերջնագիծ, քննություն, լսափող, նստարան
3) լրջախոհ, իջևան, ուղեկից, ակնդետ
4) հնձվոր, ուսուցիչ, կավճոտ, սուզանավ

7 **Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ *չկա:***

1) Շնորհալին նորոգեց ու թարմացրեց ինչպես գրականությունը, այնպես էլ երաժշտական արվեստը:
2) Միանգամից վերացան իր սերնդակիցների թյուր պատկերացումներն աշխարհի և նրա կառուցվածքի մասին:
3) Նա միաժամանակ ցանկացել է մանուկներին սովորել տալ հայոց այբուբենը՝ նրա ամեն մի հերթական տառով սկսելով իր ոտանավորի տները:
4) Հատկապես կիլիկյան գրչատների ձեռագրերը շլացնում էին իրենց ճոխությամբ՝ երբեք, սակայն, չխախտելով չափի սահմանագիծը:

8 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Դատավճռով նախատեսված էր ամբողջ գույքի բռնագրավում:
2) Ակնոցի տակից աչքերը հառնեց դեմ դիմաց նստածին:
3) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներհուն աշակերտներին:
4) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց ականակիր խավարի մեջ:

9 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) **գզրոց** - սեղանի դարակ, **դարավանդ** - հին դարերից ավանդված
2) **լերկ** - բուսականությունից զուրկ, **գայթել** - ոտքը սահել
3) **գրաստ** - բեռնակիր կենդանի, **երախայրիք** - առաջին պտուղ
4) **սնգույր** - երեսը ներկելու քսուք, **ակնակապիճ** - աչքի խոռոչ

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) ջրշուն, գալուստ, փոստատուն
2) արյուն, սուրանկյուն, աշուն
3) մականուն, հենասյուն, ձյուն
4) շրշյուն, ծանրություն, դերանուն

11 **Ո՞ր տարբերակում է դերանունը ճիշտ հոլովաձևով գործածված:**

1) Ես քո վրա հույս չեմ դնում:
2) Մեր մոտից մինչև այդ գյուղը ոտքի ճանապարհ է:
3) Նա դեռ իրեն օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
4) Մինչև լեռնագագաթը իմ հետ ոչ ոք չբարձրացավ:

12 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) եկավ, հասկացել եմ, դարձի՛ր
2) ասաց, բարձրացի՛ր, դողաց
3) հուսանք, ծիծաղել եմ, վշշում է
4) մնացինք, հավատալ, խոսում եմ

13 **Ո՞ր բառը որ բացատրությանն է համապատասխանում:**

ա. հածել	1. դեգերել
բ. հեծել	2. ձի նստել
գ. հեծկլտալ	3. տառապել
դ. հեծնել	4. հեկեկալ

1) ա-1, բ-2, գ-3, դ-4
2) ա-1, բ-3, գ- 4, դ-2
3) ա-3, բ-1, գ-2, դ-4
4) ա-3, բ-4, գ-1, դ-2

14 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց հոգնակին կազմվում է -*ներ* վերջավորությամբ:**

1. խորագիր, 2. շտաբ, 3. ոտնաձայն, 4. ջրաչափ, 5. հետախույզ, 6. մրցավար, 7. գրավատուն, 8. հորաքույր, 9. բաղաձայն

1) 2, 4, 5, 6, 9
2) 1, 4, 5, 7, 9
3) 2, 3, 4, 7, 8
4) 1, 2, 3, 7, 8

15 **Փակագծերում գրված բայերը տրված են ուղիղ ձևերով: Ո՞ր տարբերակում է սխալ դրված բայաձևը, որով բայը պիտի հանդես գա տվյալ տեղում:**

*Քամուց հնձանի դռնակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ **(երգել)** մի հին երգ: Եթե արևը **(խոնարհվել)** դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար **(մնալ)** այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի տսապից: Շուտով կիջնի ձմեռ, և ո՞վ գիտի, բացվող գարնանը նորից ի՞նքը **(բանալ)** այգու դուռը, թե՞ մի ուրիշ ձեռք:*

1) երգել – երգում էր
2) բանալ – պիտի բանա
3) խոնարհվել – խոնարհվեց
4) մնալ – կմնար

16 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Մտածեցի՝ նամակը տիկին Արաքսյայից է (ես նրան նամակ էի գրել), ու հապշտապ բացեցի նկարազարդ ծրարը, որ կարդամ գրությունը:
2) Ասում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տարագույն ծաղիկներով, ոսկեթև ու թրթռուն թիթեռներով, կարկաչուն գետերով:
3) Չնայած իշխանի՝ քրտինքի մեջ կորած նժույգը հոգնած էր, իսկ ճանապարհը՝ զառիվեր, այնուամենայնիվ նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն, որպեսզի ամրոց հասնի մի քանի վայրկյան առաջ:
4) Այդտեղ էր և նշանավոր պալատական բանաստեղծը, որը երգելով Ֆաթիմի հաղթանակներն ու փառահեղ գործերը՝ արժանացել էր նրա ջերմ համակրանքին:

17 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Դարերը գլորվում էին դարերի հետևից, …… ամպերը՝ Կովկասի ճակատների վրայով:

1) քանզի
2) ինչպես
3) հենց որ
4) սակայն

18 **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Հայերը թշնամու դեմ կռվում լիակատար հաղթանակ տարան:
2) Խնդրի լուծումը կախված է երկու անձնավորություններից:
3) Նա համբերությամբ սպասում էր ամրոցը եզերող պարսպի երկաթյա դարպասներից մեկի բացվելուն:
4) Մի՞թե ես հանցագործ եմ, որ հսկում ես բոլոր քայլերիս:

19 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա երջանկությունից անակնկալի եկավ ու ապշեց, գրեթե ցնծաց, երբ մի օր հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել, որոնք շատ նման են լինում բնորդներին:



20 **Տրված բայաձևերից որո՞նք են դրված ապառնի ժամանակով:**

1. չուտենք, 2. կպարի, 3. արժեմ, 4. երգի՛ր, 5. պիտի ժպտար, 6. գրեմ, 7. գրելու էի, 8. զգալու է

1) 1, 3, 4, 5, 7
2) 2, 3, 6, 7, 8
3) 1, 2, 4, 6, 8
4) 2, 3, 4, 5, 7

21 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

....., ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ:

1) Որևէ բան պատմելիս
2) Չնայած որևէ բան էր պատմում
3) Երբ որևէ բան էր պատմում
4) Որևէ բան պատմելու ժամանակ

22 **Ո՞ր միտքը *չի* բխում տեքստի բովանդակությունից:**

Տարածության ճշգրիտ չափումները միշտ կարևորվել են: Սկզբնապես որպես չափման միավորներ օգտագործվել են ոտնաչափը (ոտնահետքերի միջև եղած հեռավորությունը), կանգունը (արմունկից մինչև միջնամատի ծայրի չափը) և այլն: Տարածության չափման անհրաժեշտությունը մեծապես կապված է հողագործության, մասնավորապես՝ հողաբաժանման հետ: Հողագործը պետք է իմանար՝ որքան է իր հողը, որքան սերմացու կպահանջվի ցանքսի համար, իր կտորն ավելի փոքր չէ, քան հասանելի է իրեն և այլն: Սկզբնական շրջանում ոտնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն անհավասար էին, քանի որ չափողի հասակից կախված՝ ոտնաչափը ևս կարող էր տարբեր լինել: Բավական երկար ժամանակ չափման ճշգրտության խնդիրը լուծել է եգիպտական կանգունը, որն ուներ տվյալ ժամանակ իշխող թագավորի բազկի երկարությունը: Նրա գրանիտե բնօրինակը պահվում էր պալատում և ուներ 524 մմ երկարություն՝ բաժանված 28 մասերի: Թագավորական կանգունի փայտե պատճենները տարածված էին երկրով մեկ, և դրանցով չափումներ էին կատարվում մ.թ.ա. 3000-ից մինչև մ.թ.ա. 600-ականները:

1799-ին ֆրանսիացի հեղափոխականներն ստեղծեցին մետրը, որը կանգունի պես բազմացվեց և տարածվեց աշխարհում: Չափման այս միավորի հիմքում Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոներորդ մասն էր ընկած:

Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից Արեգակ ընկած միջին հեռավորությունը:

1) Գոյություն ունեցող չափագրման միավորների առաջացման հիմնական դրդապատճառներից մեկը հողագործության հետ կապված խնդիրներն էին:
2) Տարածության չափման առաջին կայուն նմուշը ստեղծվել է մի թագավորի մարմնամասի չափով:
3) Եգիպտացիները չափման համար ընտրեցին կանգունը, քանի որ համարում էին, որ մարդու բազուկի երկարությունը առավել հստակ միավոր է, քան ոտնաչափը:
4) Երկրից Արեգակ ընկած հեռավորությունը հաստատուն չէ:

23 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից բերված հատված *չկա:***

- *«Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը»:*
- *«Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:*
- *«Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով գլուխ՝ մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ՝ թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ»:*

1) «Մթնաձոր»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

24 **Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Եթե հեռանալը հեշտ լիներ, Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ գյուղից:*
   Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ:
2) *Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:*
   Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:
3) *Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփռոցի վրա:*
   Նա հետևում էր շշերը սփռոցի վրա դասավորող աղջկան:
4) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*
   Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:

25 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Թագավորը իր հրովարտակում ուտելու համար օգտագործվող մսերի թվարկումը սկսում է արգելվածներից, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

1) 1, 3, 4, 2
2) 4, 2, 3, 1
3) 4, 3, 1, 2
4) 1, 3, 2, 4

26 **Ի՞նչ երազ է տեսնում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաթուլ իշխանը մատնության գիշերը:**

1) Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
2) Ցին ու ագռավ լցվել են Թմկաբերդ:
3) Վիշապ օձը փաթաթվել է բերդին:
4) Նաղիր շահը սպանում է իրեն՝ Թաթուլին:

27 **Տրված հատվածը ո՞ր հայերենով է շարադրված:**

Սրտիս դառնահեծ հառաչանքների
Վայն ու ողբաձայն աղաղակները
Վերընծայում եմ քեզ, ո՜վ գաղտնատես,
Եվ իմ սասանված մտքի ճենճերող
Իղձերի պտուղ նվերն այս, դրած
Անձս տոչորող թախծի կրակին,
Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ:

1) գրաբարով
2) արևմտահայերենով
3) արևելահայերենով
4) միջին հայերենով

28 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Տանտերը, որի ազգանունը փողոցի շքադռան պղնձե տախտակի վրա փորագրված էր՝ Դավիթ Ֆոմիչ Աղամիրով, մոտ 40–50 տարեկան տղամարդ էր՝ խիստ ջղուտ, կարծես բրոնզից ձուլված դեմքով, սպիտակախառն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուքով»:

1) «Գիքոր» (Հ. Թումանյան)
2) «Ալպիական մանուշակ» (Ա. Բակունց)
3) «Քառս» (Ա. Շիրվանզադե)
4) «Նեղ օրերից մեկը» (Նար-Դոս)

29 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն պնդումների համարները, որոնք համապատասխանում են Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությանը:**

1. Մայր ձին բնազդով վտանգ էր զգացել այն ժամանակ, երբ դեռ թշնամու՝ գայլի ո՛չ հոտն էր զգացվում հովտում, ո՛չ ձայնն էր լսվում:
2. Գայլի կռիվը եսասիրություն էր, իսկ մայր ձիունը՝ անձնազոհություն, քանի որ գայլը կռվում էր իր ստամոքսի համար, իսկ ձին՝ իր ձագուկի:
3. Զգալով, որ շունչը փչում է, մայր ձին մի կողմ է վանում կերակրվելու եկած իր քուռակին և հրաժարվում է կաթ տալուց:
4. Փոքրիկ հովիվը զարմանում է, թե շներն ինչու այդպես արագ թափով պոկվեցին տեղից ու վազեցին դեպի կանաչ հովիտը, քանի որ ինքը գայլի ու ձիու կռիվը չէր տեսել:
5. Շների հայտնվելուց հետո գայլը անմիջապես չի նահանջում և չի հրաժարվում պայքարից, շարունակում է կռիվը արդեն շների դեմ:
6. Կանաչ դաշտում կռվի տեղը՝ սև շրջանակը, տարիների ընթացքում լցվում է կանաչով ու կորչում, և կռվի միակ հետքը մնում է քուռակի ոտքի սպին:

1) 1, 3, 4
2) 1, 5, 6
3) 2, 3, 5
4) 2, 4, 6

30 **Տրված հատվածներից ո՞րն է Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքից:**

1) Ու նրանց հետ՝ ցող արցունքով
   Լցված սրտերն ու աչեր՝
   Սարի ծաղկունք տխուր սյուքով
   Հառաչեցին էն գիշեր:
2) Ամպի տակից ջուր է գալի,
   Դոշ է տալի, փրփրում.
   Ա՜խ, իմ ազիզ յարն է լալի
   Հոնգուր-հոնգուր էն սարում:
3) Կանչում է կրկին, կանչում անդադար
   Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
   Ու թևերն ահա փռած տիրաբար՝
   Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
4) Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,
   Հրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի.
   Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝
   Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:

31 **Հ. Սահյանի «Անունդ տալիս» բանաստեղծության մեջ նշվածներից որի՞ մասին *չի* հիշատակվում:**

1) արևոտ մի սար՝ ճակատին ձյունի պատառիկ
2) հեռվում ուշացած ինչ-որ ձիերի դոփյուն
3) թեքված մի մատուռ ու բերդի տեղահան մի դուռ
4) քարափի կանաչ ափի մեջ թրթռացող երկնքի մի շերտ

32 **Վ. Տերյանի բանաստեղծությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

1) «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին…» բանաստեղծության մեջ նշում է, որ ինչպես մեր Արարատ լեռն է տեսել հազար ձյուն, այնպես էլ մեր ժողովրդի համար նոր չեն դավն ու դառնությունը:
2) «Fatum» բանաստեղծության մեջ սիրող սրտերը համեմատվում են երկնքի աստղերի հետ, որոնք թեպետ հեռու են իրարից, բայց միշտ կարոտավառ երազում են իրար:
3) «Որպես Լաերտի որդին...» բանաստեղծության մեջ հեղինակն իրեն համեմատում է երկար թափառումներից հետո հայրենիք վերադարձող հոմերոսյան հերոսի հետ:
4) «Հրաժեշտի գազել»-ում բանաստեղծը տխրությամբ հրաժեշտ է տալիս իր սիրած էակին, որից պետք է որոշ ժամանակով բաժանվի:

33 **Ո՞ր նախադասություններում փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

1. Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմը:
2. Կարկաչահոս աղբյուրն այնտեղ Թավալում էր մարգարիտ:
3. Ջուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ, Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել:
4. Նայում եմ, մինչև որ անզոր Գլուխս ծնկիդ է թեքվում:
5. Մենք կժպտանք, գո՜հ կժպտանք մեռնելիս, Որ երազում երազեցինք ու անցանք:

34 **Տրված բառաշարքում որո՞նք են *գալ* բառի բառաձևեր:**

1. գալիս, 2. գալուստ, 3. եՀ, 4. չեմ գա, 5. պետք է գար, 6. գայինք, 7. կգնան, 8. եկավ

35 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Կամսարյանը, հանկարծակիի եկած, մի վայրկյան մնաց անխոս, ապա նորից սկսեց նայել շուրջը՝ տեսնելու այն, ինչ որ գյուղացին «գյուղ» էր անվանում:
2. Վերջինս տան աղյուսե պատին հենելով ձեռքի փոցխը՝ անշտապ մոտեցավ հյուրին՝ քաղցրաժպիտ ողջունելով և տուն հրավիրելով նրան:
3. Թագուհու՝ երփնավառ քարերից կերտված բարեզարդ առանձնարանը լուսավորվելով՝ երևան հանեց հնամենի արվեստի նրբաճաշակ պերճանքը:
4. -Մա՛յր Սեդա,- լռությունը խախտեց թագուհին,- հիշո՞ւմ ես՝ մեկ-երկու ժամ առաջ հովանոցում ասացիր, թե վաղուց հայտնի է քեզ՝ ինչ վիշտ է կրծում իմ սիրտը:
5. Թեպետ այդ եզակի կառույցը վեց հարյուրից յոթ հարյուր տարեկան է, սակայն, այսօր էլ հիացնում է ինքնատիպ կառուցողական արվեստով:

36 **Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:**

1. դստրիկ, 2. թռչուն, 3. հեռադիտակ, 4. ատենադպիր, 5. գնացուցակ,
6. լրատվական, 7. գրչատուփ, 8. մանրախնդրություն

37 **Ո՞ր նախադասություններում վերաբերական կա:**

1. Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու:
2. Շողացին, ժպտացին, էլ չկան, Էլ չկան պատրանքները սիրուն:
3. Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՛ն:
4. Մի՞թե վերջին պոետն եմ ես:

38 **Ո՞ր շարքերի բոլոր բառերն են դերանուններ:**

1. նույնիսկ, նույնքան, սույն, նույնպիսի
2. նա, այն, այլ, այլև
3. քանի, քանիերորդ, քանի որ, մի քանի
4. որևիցե, ուր, այնչափ, ինքը
5. մյուս, որոշ, իրար, ոմն
6. ոչինչ, ոչ ոք, ոչ, ոչ մի

39 **Շարքերից քանիսո՞ւմ կա այնպիսի բառ, որը հոգնակի կազմելիս *չի* հնչյունափոխվում:**

- վարդաջուր, թիմ, երկիր, սալորաչիր
- կայսր, ծրագիր, բույն, սիրտ
- գինետուն, տուփ, ազդր, քուրմ
- ձուկ, վիհ, տետր, խաղաթուղթ
- շիկամուկ, վագր, քաղաքաղուռ, ձիրք

40 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից:**

ալևոր-ալեկոծ, ակնածել-պատկառել, եգիպտացորեն-սիմինդր, սմբուկ-ճակնդեղ, տարտամ-խրթին, անստույգ-թույր, երբեմնի-ժամանակ առ ժամանակ, բնորոշ-հատկանշական

41 **Տրված սյունակների բառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված՝ ըստ իրենց արտահայտած իմաստների:**

Նյութական իմաստ արտահայտող	Քերականական իմաստ արտահայտող	Վերաբերմունքային իմաստ արտահայտող
մասին	հանուն	մանավանդ
միտք անել	փոխանակում	խշխշոց
ինչպիսի	վերստին	ուր
	որևէ	վահ

42 **Պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:**

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդոտ,
Թոքախտավոր ստեղների պես ռոյալի,
Փոշուց կերած նկարների նման անթով,
Որպես մեռած գեղեցկուհու մի հայելի-
Հոգիս տխրել է անբարբառ ու չգիտի՝
Ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում-
Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի
Չի՞ ամոքում նրա կարոտը անանուն:

հանգավորում, համեմատություն, մակդիր, շրջադասություն, չափազանցություն

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ ուղիղ խնդիր կա:**

- Քո գլխի վերև ծածանվող ամպի Թավշյա ստվերով Սրբի՛ր ճակատիդ քրտինքը մաքուր:
- Ես կգամ, կնստեմ հողիդ, Եվ հողդ զորանալ կտա, Ամեն մի քարդ ինձ կառնի, Մտքիս մեջ խորանալ կտա:
- Երբ հոգնում էին օրվա հոգսերից, Փաթաթվում էին մի կաթիլ մութով, Երկինքներն էին մտնում երազի Եվ հատիկ-հատիկ աստղ էին ուտում:
- Հոգնել եմ հետ նայելուց. Դեռ աստղեր կան առջևում, Որոնք կարող են շողալ Իմ աչքաբաց աչքերում:

44 **Ընդգծվածներից քանի՞սն են գերադաս նախադասություն:**

- <u>**Ով էր դա՝**</u> ոչ ոք չէր կռահում, որովհետև դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան:
- Երբ վրանները հավաքեցին, և <u>**ժողովուրդը ուրիշ երկրների ճամփան բռնեց**</u>, Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները, ու ճամփա ընկան:
- Երբ հեռվից տեսավ մոտեցող նավը, <u>**նա զգաց**</u>, որ հոգին փոթորկվում է, որ ինքն այնքան ուրախ չէ, որքան հուզված:
- Մի շաբաթ էր՝ անձրևները դադարել էին, <u>**և մթնոլորտը տոգորվել էր գարնան արբեցուցիչ բույրով:**</u>

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հիմունքի պարագան ձևավորվում է միայն կապային կառույցով:
2. Ձևի պարագան կարող է արտահայտվել ոչ միայն ձևի մակբայներով, այլև գոյականով, դերանունով և այլն:
3. ***Մայթերն ամբողջովին թրջվել էին անձրևից:*** Այս նախադասության մեջ ***անձրևից*** բառը պատճառի պարագա է:
4. Ժամանակի պարագան կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով:
5. ***Համար*** կապով չի կարող ձևավորվել պատճառի պարագա:
6. Չափ ու քանակի պարագան ձևավորվում է միայն չափ ու քանակի մակբայներով:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում և բառաձևերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

1. հասարակա-այինն երկիր, 2. եղնիկների խայ-ալը, 3. կարկաչ-ն առվակ, 4. Ա-թամար կղզի, 5. աչքի կո-, 6. ա- ու ահյակ, 7. աշխարհի չորս ծա-երը, 8. Սոֆ- մայրաքաղաք:

1) 1-ծ, 2-թ, 4-ղ, 6-ջ
2) 2-տ, 3-յու, 5-պ, 7-գ
3) 1-ծ, 4-ղ, 6-չ, 8-իա
4) 3-ու, 5-պ, 7-գ, 8-իա

47 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:**

1) ՆԽԴ-444
2) ՌԹ-1009
3) ՏԾՁ-4560
4) ՈՀ-670

48 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) գիտուն-թերուս, օրհնել-բանադրել, գաղտնապահ-բացբերան
2) բուժիչ-ախտածին, նոսր-խիտ, կարծրատիպ-ազատախոհ
3) նշանակալի-չնչին, բերկրել-տրտմել, խելամիտ-անկշռադատ
4) շնորհաշատ-տաղանդազուրկ, տիվ-ցայգ, պիղծ-սուրբ

49 **Ո՞ր տարբերակում ստորադաս նախադասությունը գոյականական անդամի լրացում *չէ:***

1) Ես միշտ իմ սրտում պահում եմ նրա անունը, ով գուցե ինձ բնավ էլ չի հիշում:
2) Այն օրից, երբ մենք բաժանվեցինք, ես այլևս չտեսա նրան:
3) Եկեղեցին բաց լինելու դեպքում պրոֆեսորը անպայման ներս կմտներ, լուռ կխոկար սրբերից ու աստվածներից լքված տաճարում, որտեղ մի ժամանակ երգել էին հրեշտակներ:
4) Ես միշտ էլ բարձր եմ դասում նրանց, ովքեր իրենց անձը հարգել գիտեն:

50 **Ո՞ր խոսքի մասով արտահայտված որոշիչ *չկա* տրված հատվածներում:**

- Եվ ի՞նչ լեզվով են խոսելու այստեղ:
- Որ ծանրորեն օրվա մի օր արթնանում ես Եվ իմացած երկրորդ լեզուն մոռանում ես բոլորովին:
- Ասում են՝ իբր կապույտի վրա Չեն նստում ճանճեր: Լսո՞ւմ ես, Մարիա՛մ, Ինձ ներս ու դրսից կապո՛ւյտ հագցրու:

1) դերանունով
2) ածականով
3) թվականով
4) բայով

51 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Եվ դու բնավ իմ այս խոսքից մի՛ վշտանա, Այլ մտածի՛ր, Թե ջրհորի մութ խորության չափման համար Իր սեփական մանկանն ո՞վ է ջրհոր նետում:
2) Եվ առավել լավ չէ՞ արդյոք, Որ մարդու ոտքը սայթաքի, Քան թե լեզուն:
3) Չե՞ս զգում արդյոք, Որ ապստամբած քո թևերի տակ Մենակությունն է ճխլել ինքն իրեն:
4) Իսկ շուրթերիս, փակ շուրթերիս ձորի միջով Մի ժպիտ է անվերջ սահում:

52 **Նախադասության անդամների ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ *չկա:***

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ տրված չէր հանգիստ հոգով զբաղվել իմ գործով. զգում էի, որ նյարդերս սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

1) **ինձ** – դերանուն, սեռական հոլով, **զբաղվել** – անորոշ դերբայ, **հանգիստ** – ածական
2) **դառնում էր** – պակասավոր բայ, **գործով** – գոյական, **տրված** – հարակատար դերբայ
3) **զգում էի** – ներգործական սեռի բայ, **բացի** – կապ, երկդրություն, **նման** – ածական
4) **աստիճանաբար** – վերաբերական, **համար** – կապ, հետադրություն, **նյարդերս** – ստացական հոդով գոյական

53 **Ո՞ր տարբերակում է ընդգծված անկանոն բայը տվյալ ձևում անկանոնություն դրսևորել:**

1) Եվ ո՞վ <u>կասի</u>՝ ինչու ես դու, և ո՞վ կասի, թե ուր հասար:
2) Ինչ էլ <u>լինի</u>, կգամ, չկանչես էլ կգամ:
3) Այդ թռչունների անունը <u>տալիս</u> միշտ պատկերացնում ենք արևադարձային ճոխ մի բնապատկեր:
4) Ամբողջ օրն անցկացրեց փոքրիկ աղջկա հետ. ոչ մի րոպե <u>չթողեց</u> նրան մենակ:

54 **Ո՞ր նախադասության մեջ կապ *չկա:***

1) Բայց սովորաբար նա ինձ մոտ է գիշերում. այս երեկո եթե վաղ գա, հենց այս գիշերվա գնացքով կճանապարհեմ:
2) Չիմացա՝ ինչպես ճաշեցի, որովհետև ինձ շատ էր հետաքրքրում այն տեսակցությունը, որ պիտի ունենայի Սառայի հետ:
3) Նա իսկույն բաժանվեց ինձնից այնքան ուրախ ու հանգստացած, որ կարծես այլևս ոչ մի դժբախտություն չէր անհանգստացնում իրեն:
4) Նա, ըստ այդ որոշման, պետք է հանդիպեր նրան որևէ չեզոք տեղում և հասցներ ագարակ:

55 **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ *չկա:***

1) Նա իր մեջ կրում էր այն ամենը, ինչ թելադրում էր ժամանակի ոգին:
2) Այստեղ նրանք ունեին բավական մեծ քանակությամբ նավթահորեր, երկու հանք, մի ահագին նավթագործարան:
3) Արդեն մի քանի տարի է՝ նա մեզ մոտ է ծառայում:
4) Նա պետք է հուսա, որ իր երազանքները կիրականանան:

56 **Ո՞ր տարբերակում է ուղղակի խոսքը ճիշտ փոխակերպված:**

1) *- Մենք այնքան մտերմացել ենք, Սե՛դա, որ ես ազատ կարող եմ իմ կարծիքը հայտնել քեզ,- ասաց իշխանը ժպտալով:*
   Իշխանը ժպտալով ասաց Սեդային, որ իրենք այնքան մտերմացել են, որ նա ազատ կարող է իր կարծիքը հայտնել նրան:
2) *Մոսկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել՝ մոտենամ ու ասեմ.*
   - Ես Ձեր որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:
   Մոսկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել՝ մոտենամ ու ասեմ, որ ես իր որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:
3) *- Եթե ձեր ծնողները շատ սիրելուց ձեզ կուռք են դարձրել, բարի՛ եղեք նրանց հարգել,- ասում էր ուսուցիչը մեզ:*
   Ուսուցիչը մեզ ասում էր, որ եթե մեր ծնողները շատ սիրելուց մեզ կուռք են դարձրել, ուրեմն մենք պիտի բարի լինենք նրանց հարգել:
4) *- Եթե ձեր հանձնաժողովը չընդունի իմ սկզբունքները, ես շարունակելու եմ իմ գործը,- հանգիստ պատասխանեց Հակոբյանը ներկաներին:*
   Հակոբյանը հանգիստ պատասխանեց ներկաներին, որ եթե իրենց հանձնաժողովը չընդունեց իր սկզբունքները, ինքը շարունակելու է իր գործը:

57 **Ո՞ր շարքում դերբայական ձևի սխալ կազմություն *չկա:***

1) թռչելիս, չեղած, դիպչող, տուժած
2) նստեցնել, սառչած, ուրախացող, խմեցնել
3) փախչելիս, սառչող, կպած, աշխատացնել
4) փրկված, շփոթեցնել, կառչող, խաբնվել

58 **Ո՞ր նախադասության մեջ կապի գործածության կամ հոլովառության սխալ *չկա:***

1) Կատարվածի համար կարելի է միայն ափսոսալ:
2) Բոլորը եկել էին բացառությամբ բժշկից:
3) Ձեր առաջարկների հետ անհնար է չհամաձայնել:
4) Փոխարեն դաս սովորելու՝ երաժշտություն ես լսում:

59 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Այս արգահատելի մարդը(1) Հոհան եպիսկոպոսը ոչ միայն ագահ էր այլ նաև անինքնասեր: Պատահում էր(2) գնում էր թագավորի պալատ և իրեն պահում էր(3) ինչպես խեղկատակ(4) չամաչելով իր տարիքից և կոչումից: Չորեքթաթ վազելով(5) ծամածռություններ անելով ու կենդանիների ձայներ հանելով(6) ծիծաղեցնում էր թագավորին(7) ուղտի պես սողալով նրա ոտքերի առջև:

Եվ ուղտի սապատի պես մեջքը ուռցրած(8) վազվզում էր սրահում ապա մոտենում թագավորին(9) կրկնում նույն խոսքերը: Իսկ թագավորը կամ իշխանները նրա մեջքին դնում էին կնքված հրովարտակներ(10) իբր թե թոթափելով իրենց մեղքերը:

1) 2, 3, 4, 6, 10
2) 1, 2, 4, 6, 7, 8, 10
3) 2, 5, 7, 8, 9
4) 1, 5, 4, 6, 7, 8, 10

60 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Ողջ ժողովուրդը ցնծագին բացականչություններով դիմավորեցին իրենց սպարապետին:
2) Որպես մարդ՝ նա սիրված էր, բայց որպես ղեկավար՝ նրան այնքան էլ չէին ընդունում:
3) Ուղեգրի արժեքի մեջ մտնում է նաև նախաճաշն ու ընթրիքը:
4) Մարիամը դստեր ու թոռների հետ հաճախ էր լինում թատրոնում:

61 **Տեքստից դուրս բերված նախադասությունները բաց թողած տեղերում ո՞ր հերթականությամբ է պետք տեղադրել:**

Բերդից՝ քարե այդ վիթխարի սնդուկի երկու կողքերից սկսվելով՝ ծուռումուռ, հսկա սապատավոր ուղտերի նման դեպի վար՝ դեպի քաղաքն են իջնում քաղաքի երբեմնի պարիսպների հիմիկվա մնացորդները: ..... Բայց հիմա քարե այն հսկա ուղտերի սապատներն են միայն ծուռտիկ բլուրների նման տեղ-տեղ մնացել: Մնացել են հիմա այն հին պարիսպների զարմանք հետքերը միայն: ..... Ամեն մեկը հիմա մամռապատ մի պատ է կատարյալ, չիմացողը կասի՝ ո՞վ է այս բլուրի քարերը հղկել, ազնվացրել և մամուռով պատել: Իսկ մի վիթխարի կտորը այդ առասպելական պարիսպի մինչև օրս էլ մնացել է քաղաքի միջով անցնող գետի ճիշտ մեջտեղում: ..... Կարծում են՝ կամուրջ է եղել, և համոզված են, որ այդպիսի մի կամուրջ Վարդան զորավարը միայն կարող էր շինել, որովհետև այսօրվա միամիտ նահրցին այն ամենը, որ մեծ է և զարմանալի, ինչ որ նահրյան է ու հաղթական, վերագրում է Վարդան Մամիկոնյանին՝ վերջին այդ արքայակերպ նահրցուն, որի մասին այսօր ամեն մի հասարակ նահրցի այնքանը միայն գիտե, որ բարեկենդանի հինգշաբթի օրը բոլոր նահրյան եկեղեցիներում պատարագ է լինում նրա հիշատակին: Երգվում է «Լռեց ամպերը», և այդ օրը բոլոր նահրցիների համար տոն է: ..... Ասում են (և այդ բոլորը գիտեն), որ գետում խեղդվածները գալիս հավաքվում են կամուրջի տակ գտնվող ահռելի վիհերում. վիհի վրա է կանգնած այդ հսկա քարակույտը, ահա թե ինչ: Նրա տակ դատարկ է, բոլորովին դատարկ: Եվ այդ դատարկության վրա, որպես նահրյան հնամենի զարմանք, եղել է կամուրջը, կախվել է վիհերի վրա ծանր ու հաստատ:

1. Պարիսպի այդ կտորն է ահա, որ կոչվում է հիմա Վարդանի կամուրջ:
2. Առաջ, շատ հնում քարե ուղտերի անընդհատ ձգվող մի քարավան է եղել, ամրակուռ մի պարիսպ, որ, բերդից իջնելով, անցնելիս է եղել գետը և ամբողջ քաղաքը իր մեջ առնելով՝ տարիներ շարունակ պաշտպանել է բնակիչներին չարից ու ոսոխից:
3. Բայց այդ չէ, իհարկե, պատճառը, որ Վարդանի կամուրջը նահրցիների աչքին դարձել է խորհրդավոր մի հրաշք՝ ահռելի գեղեցկություն:
4. Մեկն այնտեղ ահա՝ բերդի պատերին կպած, մյուսն այնտեղ՝ գետեզերքին, մեկն էլ՝ հեռու-հեռուն՝ քաղաքից դուրս:

1) 2, 3, 4, 1
2) 2, 4, 1, 3
3) 4, 1, 2, 3
4) 4, 1, 3, 2

62 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ծանր ժամանակներից ի վեր թեև շատ բան էր փոխվել մեր կյանքում, …….. մայրիկիս սրտում վախ կար վաղվա օրվա հանդեպ:

1) այնուամենայնիվ
2) քանզի
3) ուստի
4) ուրեմն

63 **Տրված նախադասությունների դերբայական դարձվածների շարահյուսական պաշտոնները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

ա. Շուռ գալով նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:
բ. Նոր իմացվեց խմբի՝ արտասահմանից վերադառնալը:
գ. Օդանավակայանում բարձրախոսով հայտնեցին ժամանող ինքնաթիռի վայրէջք կատարելը:
դ. Նրա ձախողման պատճառը ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն էր:

1. ենթակա
2. ստորոգելի
3. որոշիչ
4. ուղիղ խնդիր

1) ա -3, բ -4, գ -1, դ -2
2) ա -4, բ -2, գ -3, դ -1
3) ա -3, բ -1, գ -4, դ -2
4) ա-4, բ -2, գ -1, դ -3

64 **Տրված բնութագրումներից ո՞րը 5-րդ դարի հեղինակներից որի ստեղծագործությանն է վերաբերում**:

1. Կերտված է հայ կրթական, լուսավորչական գործչի առաջին պատմագեղարվեստական կերպարը:
2. Սկսվում է Տրդատ Մեծի մահից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
3. Ընդգրկում է շուրջ հարյուր տարվա պատմություն՝ սկսած Հայաստանի մասնատումից Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:
4. Ներկայացվում է հայ նախարարական տոհմերի ծագումնաբանությունը:

ա. Փավստոս Բուզանդ. «Հայոց պատմություն»
բ. Ղազար Փարպեցի. «Հայոց պատմություն»
գ. Կորյուն. «Վարք Մաշտոցի»
դ. Մովսես Խորենացի. «Հայոց պատմություն»

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

65 **Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

1) Հիշում եմ երբ Վանի արևը կանգնում էր զենիթում փոքր ժամանակ արևն ինձ մեծ շատ մեծ էր թվում հանկարծ ծովից եկող մեղմ սյուքը փարվում էր քաղաքին:
2) Քաղաքի այս թաղամասն ուղղակի անօրինակ ու անկրկնելի էր գեղեցկության ու արվեստի սիրահար Զոհրապը ապշած էր նրա աշխույժ փողոցներով բազմամարդ հրապարակներով:
3) Արամի դեմքին մի փունջ ցասում է կուտակվել թվում է նա լցված է ահռելի տենդով ու խռովքով:
4) Ծառայությունից ազատվելու իմ ցանկության մասին ինքնընտրության հասկանալի է ոչ մեկին չպատմեցի իսկ այդ օրվա իմ անակնկալ անհետացումը քողարկեցի մի ստահոդ պատմությամբ:

66 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ արարողակարգով է դաշինք կնքվում Հորդայի արքայի և հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի միջև՝ ընդդեմ Պարսկաստանի.**

1) Հորդայի արքան բերել է տալիս մի թաս ջուր, և ինքն ու Վարդանը խմում են նույն թասից, այնուհետև երկուսն էլ երդվում են Ավետարանի վրա:
2) Դաշինքի կնքման արարողությանը մասնակցում է մեծ խաքանը՝ Աթլը, որն իր մատանիով վավերացնում է ուխտը:
3) Հորդայի արքան և հայոց սպարապետը դաշույնով ծակում են իրենց բազուկները և ձեռքերը խաչելով՝ միմյանց խառնում արյունը:
4) Հայոց սպարապետը բավական վարժ ստորագրում է դաշնագրի տակ, իսկ Հորդայի արքան, անգրագետ լինելով, դաշույնով անցք է բացում բթամատի վրա և արյամբ վավերացնում դաշինքը:

67 **Ո՞ր նախադասություններում շարադասության սխալ կա:**

1. Աշխարհի սպասվող ըմբշամարտի առաջնությունը, անտարակույս, կգրանցի նոր անուններ, նոր հաղթողներ:
2. Ցանկացած մրցույթի միջազգային դաշնամուրային հաղթող գուցե չկարողանա այնպես նվագել Շոպեն, ինչպես Արթուր Փափազյանը:
3. Նա վարակիչ ոգևորությամբ էր պատմում իր ամառանոցի անկրկնելի ափամերձ բնանկարների մասին, արտասովոր իտալական սովորույթների մասին:
4. Ինչն էր նրան մտահոգել գիշերվա այդ ուշ ժամին՝ չկարողացա գուշակել, բայց նրա՝ մեր տուն գալը նշան էր, որ իմ նկատմամբ ինչ-ինչ կասկածներ ուներ:

68 **Տրված տեքստի համարակալված պարբերություններից որոնցո՞ւմ ավելորդ (նախորդ կամ հաջորդ մտքի և առհասարակ տեքստի հետ չկապվող) նախադասություն կա:**

1. Քաղաքի պաշտոնական կենտրոններից ավելի հետաքրքիր և ուշագրավ են, եթե կարելի է այսպես արտահայտվել, «անպաշտոն» կենտրոնները: Թեպետև նրանք, ըստ մեծի մասի, չեն վայելում հանրության կողմից այն խորհրդավոր հարգանքը, որ վիճակվել է պաշտոնական կենտրոններին: Երբ է շինված նաիրյան այդ հին քաղաքը՝ աստված ինքը գիտի, բայց ասում են, որ այդ քաղաքը հիմնողները եղել են հին նաիրցիներ:

2. Բայց ինչո՞վ, ինչո՞վ է պակաս և ինչի՞ համար հասարակական հիմնարկություն չպետք է համարվի թեկուզ հենց, օրինակի համար, եկեղեցական մոմավաճառքի խանութը, որտեղից դուրս ելած բոլոր մոմերը կնքված են լինում, այո՛, իսկական նաիրյան կնիքով: Կրկնում եմ՝ իզուր են միամիտ քաղաքացիք եկեղեցական մոմավաճառքի խանութի վրա աչքի ծայրով նայում. նա կենտրոն է, և որքան էլ ասածս չափազանցություն թվա, կարևոր կենտրոն:

3. Բայց որպես մի իսկական «քաղաքական ակումբ» և այն էլ ոչ միայն վարժապետների և հոգաբարձուների, այլև ազգային գործերով բոլոր հետաքրքրվողների համար, որպես այդպիսի ահա մի հասարակական կենտրոն հայտնի է քաղաքում «Լույս» նավթարդյունաբերության ընկերության այդտեղի ներկայացուցչի գրասենյակը: Եկեղեցիներին և ծխական դպրոցներին վերաբերող բոլոր խնդիրներն այդտեղ են արծարծվում: Բայց քաղաքը ուներ մի շարք տեղական հրաշալիքներ:

4. Մոմավաճառքի՝ արտաքինից այդ անշուք խանութը այնպես համեստ պահվել է փողոցի ամենախուլ անկյունում: Էապես այն նշանակալից դերն է խաղում քաղաքի հասարակական կյանքում, ինչ դեր որ խաղում են քաղաքակրթված երկրներում քաղաքական ակումբները:

5. Իսկ խանութների առաջ նստել է նաիրցի խանութպանը և ծույլ, անփույթ հորանջելով՝ սպասում է գնորդի: Եվ այդպիսի մի դեր խաղալու համար ամեն հարմարություններ ունի մոմավաճառքի խանութը: Տաք է, քաղաքի կենտրոնում է գտնվում, և որ ամենակարևորն է, ազատ է կողմնակի այցելուներից:

69 **Ո՞ր մտքերն են հակասում շարադրանքի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Արևի շուրջ պտտվող խոշոր մոլորակները 8-ն են. դրանցից 6-ը, բացի Մերկուրիից ու Վեներայից, ունեն նաև իրենց արբանյակները: Բացի խոշոր մոլորակներից կան և, այսպես կոչված, գաճաճ մոլորակներ, ինչպես նաև այլ փոքր մարմիններ՝ աստղակերպներ և գիսաստղեր, որոնք, ի տարբերություն խոշոր մոլորակների շուրջը պտտվող արբանյակների, պտտվում են Արևի շուրջը:

Պլուտոնը, որ մինչև 2006 թվականը, հակառակ իր փոքր չափերին, խոշոր մոլորակների թվին էր դասվում՝ դրանց քանակը հասցնելով 9-ի, ներկայումս գլխավորում է գաճաճ մոլորակների շարքը: Ըստ չափերի՝ նրան հաջորդում է Ցերերա գաճաճ մոլորակը, որը 7500 անգամ փոքր է Երկրից իր զանգվածով, իսկ նրա շառավիղը 20 անգամ փոքր է Երկրի շառավղից: Այդ պատճառով էլ շատ փոքր է նրա ծանրության ուժը. եթե Երկիր մոլորակի վրա մարդը կարող է ցատկել միջինը 50 սմ, ապա այդ մոլորակի վրա՝ 16 մետր:

Աստղակերպները ունեն ավելի փոքր չափեր և ոչ կանոնավոր ձևեր՝ ի տարբերություն գաճաճ մոլորակների, որոնք խոշոր մոլորակների նման գնդաձև են: Դրանցից ամենախոշորի՝ Վեստայի վրա, որը մի կողմից կտրված բլիթի տեսք ունի, մարդը հեշտությամբ կցատկի 30 մ՝ անցնելով բարձր բլուրների վրայով: Կան նաև ընդամենը մի քանի տասնյակ մետր շառավիղ ունեցող աստղակերպներ: Կան նաև ավելի փոքրերը: Այդպիսի աստղակերպների մակերևույթի վրայից մարդը մինչև անգամ կարող է թռչել հեռանալ բաց տիեզերք, ինչը բացառվում է Երկրի պարագայում:

1. Որոշ աստղակերպների վրայից, ի տարբերություն Երկրի, մարդը կարող է առանց տիեզերանավի հեռանալ դեպի տիեզերական տարածություն:
2. Աստղակերպները մոլորակների նման կանոնավոր ձև ունեն:
3. Ներկայումս Պլուտոնը չի համարվում այնպիսի մոլորակ, ինչպիսին, օրինակ, Վեներան:
4. Գաճաճ մոլորակները և աստղակերպները պտտվում են Արևի շուրջը:
5. Թեև Վեստան Ցերերայից ավելի խոշոր է, սակայն մոլորակ չի համարվում իր տեսքի պատճառով:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***«Կամարակապ դարպասի մոտ նստելը պապիս սովորությունն էր:»*** նախադասության ենթական արտահայտված է դերբայական դարձվածով:
2. Դերբայական դարձված ձևավորում են միայն անկախ դերբայները:
3. Անորոշ դերբայով չի կարող ձևավորվել անջատման անուղղակի խնդիր դերբայական դարձված:
4. Ենթակայական դերբայով արտահայտված դերբայական դարձվածը կարող է լինել հատկացուցիչ:
5. Դերբայական դարձվածը լրացնում է միայն բայական անդամին:
6. Հարակատար դերբայով կազմված որոշիչ դերբայական դարձվածը որոշյալից չի տրոհվում: